



«Տնտեսություն եւ արժեքներ» հետազոտական կենտրոն

Հայաստանի անտառային և փայտամշակման ոլորտի տնտեսական հետազոտություն

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ


Հայաստանի Հանրապետությունն այն 70 սակավանտառ երկրներից է, որտեղ անտառածածկ մակերեսն ընդհանուրի 10%-ից էլ քիչ մասն է կազմում: Սակավ սաղարթածածկի պայմաններում անտառազրկումն առավել, քան էական սպառնալիք է, որը կործանարար և անվերադարձ հետևանքներ կարող է ունենալ շրջակա միջավայրի վրա, ինչպես նաև՝ եկամուտների նշանակալի կորստի պատճառ դառնալ:

Անտառազրկումը հիմնականում շինափայտի և վառելափայտի ստացման նպատակով իրականացվող ապօրինի հատումների հետևանք է: Ապօրինի հատումներն ու փայտանյութի ապօրինի վաճառքը Հայաստանում արդեն տասնամյակից ավելի շարունակվող՝ միլիոնավոր դոլարների շրջանառություն ապահովող ոլորտ է:

Սույն հետազոտությամբ փորձ է արված՝ գնահատել ապօրինի հատումների ծավալները, ինչպես նաև՝ վերլուծել փայտամշակման ոլորտի և տնային տնտեսությունների կողմից վառելափայտի սպառման յուրահատկությունները:

Հետևյալ գծանկարում արտացոլված են անտառազրկման դինամիկան նկարագրող տվյալներն՝ ըստ արբանյակային պատկերներից ստացված տեղեկատվության վերլուծության արդյունքների:

Անտառազրկման թվաքանակություն



	Ժամանակաշրջան	
	1993 - 2000	2000 - 2006
Բնափայտի պաշարի միջին տարեկան զուտ նվազումը (մ ³)	1,140,000	310,000
	1993-2006	
Բնափայտի պաշարի տարեկան միջին գնահատված բնական	390,000	

աճ (մ ³)		
Տարեկան հատումների օրինական թույլատրելի չափը ¹ (մ ³)		70,000
Հրդեհից վնասված պաշարների պաշտոնապես հայտարարագրված միջին տարեկան ծավալը (մ ³)		2,500
	1993-2000	2000-2006
Միջին տարեկան ապօրինի հատումներ (մ ³)	1,460,000	627,500

Աղբյուրը. 2000 և 2006 թթ. տվյալները «Տնտեսություն և արժեքներ» ՀԿ-ի գնահատականներն են՝ համաձայն Landsat-ի տվյալների, իսկ 1993թ. տվյալների համար՝ տե՛ս Տեր-Ղազարյան և այլք, 1995:

Բնափայտի շուկայի ծավալների պաշտոնական և ոչ պաշտոնական գնահատականներն ամփոփված են հետևյալ աղյուսակում:

	Փայտամշակման ոլորտ /պաշտ./	Փայտամշակման ոլորտ /գնահատ./	Փայտանյութի արտահանում /պաշտոն./	Փայտանյութի արտահանում /գնահատ./	Վառելափայտ /պաշտոն./	Վառելափայտ /գնահատ./	Ընդհանուր հատումներ /պաշտոն./	Ընդհանուր հատումներ /գնահատ./
Տարեկան ծավալ (1,000 մ ³)	6,6	339	8	12	63	291	70	630
Տարեկան ծավալ (ԱՄՆ դոլար)	10 մլն.	132 մլն.	1 մլն.	2,7 մլն.	2,5 մլն.	7,5 մլն.	13,5 մլն.	142,2 մլն.

Աղբյուրը. «Տնտեսություն և արժեքներ» ՀԿ գնահատականը 2005թ. շուկայի ծավալների վերաբերյալ՝ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության կողմից հրապարակված պաշտոնական տվյալների հետ համադրությամբ:

Վառելափայտի սպառում

Վառելափայտի սպառումը տնային տնտեսությունների կողմից մեծապես պայմանավորված է աղքատության բարձր մակարդակով: Ուսումնասիրության արդյունքների համաձայն՝ ընդհանուր տնային տնտեսությունների մոտ 9%-ն է վառելափայտ օգտագործում սննդի պատրաստման, ջեռուցման կամ այլ կենցաղային նպատակներով:

Վառելափայտի զգալի ծավալներ սպառվում են սննդի սպասարկման հաստատությունների կողմից՝ խորովածի պատրաստման նպատակով:

Վառելափայտի սպառումն ունի աստիճանական նվազման միտում, քանզի տնտեսական աճին համընթաց՝ բարձրանում է տնային տնտեսությունների բարեկեցության մակարդակը, ընդլայվում է գազամատակարարման ցանցն ու սպառողների թիվը: Սպառման ծավալների նվազեցմանը նպաստում է նաև անտառների՝ բնակավայրերից հեռացվելու միտումով պայմանավորված դժվարամատչելիությունը:

Փայտամշակման ոլորտ

Փայտամշակման ոլորտը ներառում է 300 փոքր ու միջին ձեռնարկություններ, որոնց հիմնական գործունեությունը բնափայտի մթերումն է, վերամշակումը, պատրաստի փայտյա ապրանքատեսակների արտադրությունն ու առևտուրը:


Նշված ձեռնարկությունները հիմնականում գործում են ապօրինի հատված բնափայտի օգտագործմամբ: Ոլորտի իրական շրջանառության ծավալներն ավելի, քան 10 անգամ գերազանցում են պաշտոնական տվյալները: Արտահանման իրական ծավալները մոտ երեք անգամ ավելի են պաշտոնական տվյալներից: Արտահանման կառուցվածքում մեծ է անմշակ բնափայտի տեսակարար կշիռը:

Օրինական և ապօրինի բնափայտի արժեքների (զների) միջև առկա մեծ ճեղքվածքը (մոտ 73,000 ՀՀ դրամ՝ 1 մ³ շինափայտի և 1,500 ՀՀ դրամ՝ վառելափայտի համար) զգալի ֆինանսական խթաններ է ապահովում ապօրինի հատումների համար:

¹ Եներգետիկ ճգնաժամի տարիներին պաշտոնապես թույլատրելի հատումների ծավալն աճեց մինչև 100,000մ³ (1993թ.), որից մոտավորապես 45,000մ³ բաժին է ընկել վառելափայտին: Բացի այդ, առաջադրվեց թափուկների մթերման ծրագիր, ինչը որոշ չափով օժանդակեց բնակչության էներգետիկ կարիքների բավարարմանը: 1994թ. մոտ 200,000մ³ քվտա բաշխվեց՝ ըստ անտառտնտեսությունների:

Հետևյալ գծագիրն արտացոլում է փայտամշակման արդյունաբերության կառուցվածքի ուրվագծերը. վերջինիս միջին տարեկան եկամուտը գնահատված է մոտ 132 մլն. ԱՄՆ դոլար:

Հայաստանի փայտամշակման արդյունաբերության կառուցվածքը:



Առաջարկվող լուծումներ

1. Գազամատակարարման ընդլայնում և մատչելիության ապահովում, հատկապես՝ գյուղական համայնքներում միկրո վարկերի տրամադրման և սարքավորումների տեղադրման նախնական վճարումների նվազեցման միջոցով
2. Շինափայտի ներմուծման ազատում ԱԱՀ-ից
3. Շինափայտի միասնական շուկայի և փայտամշակման ոլորտի ասոցիացիայի ստեղծում
4. Շինափայտի արտահանման արգելքի սահմանում
5. Ծառային տնտեսությունների զարգացման խրախուսում
6. Փայտանյութի կրկնակի օգտագործման և վերականգնվող էներգիայի արտադրության խթանում
7. Էկոտուրիզմի խթանում, ոչ բնափայտային անտառանյութի և անտառային ծառայությունների ոլորտի խթանում:
8. «Կանաչ սպառման» շարժման հիմնադրում/ձևավորում
9. Անտառային ռեսուրսների մոնիթորինգի և տեղեկատվական համակարգի անկախ մարմնի հիմնում կամ մոնիթորինգի պետական գործող մարմնի կատարելագործում
10. Անտառների սերտիֆիկացում և «հսկողության շղթայի» գործընթացների իրականացում
11. Անտառային ոլորտի կարգավորման ու կառավարման քաղաքականության ամրապնդում
12. Անտառային ոլորտի զարգացմանն ուղղված նախագծերի ինտեգրացում
13. Փայտամշակման ոլորտի ֆինանսական հոսքերի վերահսկողության սահմանում
14. «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կառավարման կառուցվածքի վերակազմակերպման նպատակահարմարության դիտարկում՝ որոշումների կայացման գործընթացում այլ կարևոր շահագրգիռ կողմերի ներգրավման առումով